Կարգապահական գործ՝ **ԿԳ-14168**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2015 թվականի հուլիսի 06-ի թիվ 118-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ № ԿԳ/77-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐՄԵՆ ՈՒՄՐՇԱՏՅԱՆԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ նաև **Պալատ**) խորհուրդը (այսուհետ՝ նաև **Խորհուրդ**),

Նախագահությամբ՝ Խորհրդի անդամ Կարեն Մեժլումյանի

մասնակցությամբ Խորհրդի անդամներ՝ Ալեքսանդր Սիրունյանի, Երվանդ Վարոսյանի, Լիպարիտ Սիմոնյանի, Լուսինե Սահակյանի, Կարեն Սարդարյանի, Մարտուն Փանոսյանի, Մելանյա Առուստամյանի, Նելլի Հարությունյանի, Սիմոն Բաբայանի և Տիգրան Խուրշուդյանի,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

06.07.2015թ.-ին Երևան քաղաքում քննության առնելով փաստաբան Արմեն Ումրշատյանին (փաստաբանական գործունեության արտոնագիր № 385) (այսուհետ նաև՝ **Պատասխանող**), կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Տ

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքերը.</u>**

Քաղաքացի Արթուր Միրզոյանը (այսուհետ նաև՝ Դիմող) 25.11.2014թ.-ին ՀՀ փաստաբանների պալատի նախագահին հասցեագրված դիմումով խնդրել է Արմեն Ուրմշատյանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ՝ իրենից խաբեությամբ գումար կորզելու, պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու համար, ինչպես նաև պարտադրել ամբողջությամբ ետ վերադարձնել գումարը, որի դիմաց փաստաբանը ոչ մի իրավաբանական օգնություն չի ցույց տվել:

2. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին Պալատի նախագահի որոշումը.</u>**

2014 թվականի դեկտեմբերի 25-ին Պալատի նախագահի կողմից կայացվել է «Փաստաբան Արմեն Ումրշատյանի նկատմամբ կարգապահական վարույթ

հարուցելու հարցը քննարկելու մասին» թիվ 429-Ա/ԿԳ-14168 որոշումը, համաձայն որի որոշվել է.

«1. Արթուր Միրզոյանի դիմումի հիման վրա փաստաբան Արմեն Ումրշատյանի (արտոնագիր թիվ 385) նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ՝ Կանոնագրքի 2.7.2, 3.1.8, 3.5.5 և 3.6.1 ենթակետերի խախտման հատկանիշներով (կարգապահական գործ թիվ ԿԳ-14168):

3. Նշված կարգապահական վարույթով դիմող ճանաչել Արթուր Միրզոյանին:

4. Ընդունել ի գիտություն, որ փաստաբան Արմեն Ումրշատյանի նկատմամբ սույն որոշմամբ հարուցվող կարգապահական վարույթը Կանոնագրքում՝ արարքի կրկնակիությունը սահմանող 9-րդ գլխի կանոններով առերևույթ կարող է որակվել որպես ակնհայտ կոպիտ կարգապահական խախտում:

5. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Իրինա Փիլոյանին՝

– կարգապահական գործը հինգ օրվա ընթացքում հանձնել հերթական կարգապահական գործ նախապատրաստողին.

– սույն որոշման մեկական օրինակ ուղարկել Դիմողին և փաստաբան Արմեն Ումրշատյանին՝ պարզաբանելով նրանց «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39.[2] հոդվածով նախատեսված իրավունքները»:

3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

3.1 Դիմողի դիմումի համառոտ բովանդակությունը.

Դիմող՝ դիմելով **Պալատ** հայտնել է, որ ծանոթանալով փաստաբան Արմեն Ումրշատյանի հետ ցույց է տվել իրեն և եղբորը պատկանող շինության սեփականության իրավունքի խախտված հետ կապված փաստաթղթերի փաթեթը, որն ուսումնասիրելով՝ փաստաբան Արմեն Ումրշատյանն ասել է, որ ժամկետի հարց չկա և կարող է գործը գլուխ բերել՝ նշելով, որ փաստաբանական ծառայությունների մատուցման գումարն արժե 1000 (հազար) ԱՄՆ դոլար, այն պայմանով, որ եթե չկարողանա դատական նիստը Դիմողի օգտին շահել, ետ կվերադարձնի ամբողջ գումարը:

Դիմողն իր եղբոր հետ համաձայնվել են և 2014 թվականի փետրվարի 14-ին Դիմողը փաստաբան Արմեն Ումրշատյանի հետ կնքել են փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր (**այսուհետ՝ Պայմանագիր**), որը Դիմողը ստորագրել է առանց կարդալու:

Դիմողը նշել է, որ տուն հասնելով կարդացել է, որ Պայմանագրի 2.4 և 2.5 կետերի համաձայն՝ գումարը ենթակա չէ վերադարձման, ինչից ելնելով անմիջապես ետ է գնացել փաստաբանի մոտ և ասել, որ Պայմանագիրը պետք է փոխվի: Փաստաբան Արմեն Ումրշատյանը պատասխանել է, որ Պայմանագիրը փոխել պետք չէ, և իր ձեռքով Պայմանագրի վերջում ավելացրել է *«Պայմանագրի 2.4 և 2.5 կետերը անհրաժեշտ է ընթերցել այն կտրվածքով, որ այդ գումարը ենթակա է վերադարձման»:*

Դիմողը հայտնել է, որ փաստաբան Արմեն Ումրշատյանին վճարել է 500 (հինգ հարյուր) ԱՄՆ դոլար և 160.000 (հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ, իսկ

մնացած 45.000 (քառասունհինգ հազար) ՀՀ դրամը պայմանավորվել են, որ կվճարի դատի ավարտից հետո:

Պայմանագիրը կնքելուց հետո Դիմողը կարծել է, որ փաստաբանն անմիջապես գործի կանցնի, քանի որ շինությունը քանդելու վտանգ էր սպառնում, բայց օրերն անցել են և դատարանից ոչ մի լուր չի եղել:

Ըստ Դիմողի՝ իր այն հարցին, թե ի՞նչ նորություն կա գործից, փաստաբան Արմեն Ումրշատյանը պատասխանել է, որ ամեն ինչ լավ է, շուտով նիստ կլինի:

Բավական ժամանակ անցնելուց հետո Դիմողն առանց փաստաբանին տեղյակ պահելու 2014 թվականի մարտի 20-ին գնացել է Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի առաջին ատյանի դատարան, քանի որ փաստաբանի ասելով հայցադիմումն այնտեղ էր ներկայացվել, որպեսզի պարզի թե ինչ վիճակում է գտնվում գործը: Դատարանում Դիմողին հայտնել են, որ ոչ մի հայց չկա իրենց կողմից ներկայացված:

Դիմողը զանգահարել է Արմեն Ումրշատյանին և ասել, որ նա ստում է, ոչ մի հայց չկա ներկայացված դատարան, իսկ փաստաբան Արմեն Ումրշատյանը վրդովվել է, որ Դիմողն իրեն ստուգում է և ասել, որ հայցը ներկայացվել է ՀՀ վարչական դատարան:

Դիմողն անմիջապես գնացել է ՀՀ վարչական դատարան և պարզել, որ այնտեղ էլ հայց չկա ներկայացված, որից հետո կրկին զանգահարել է փաստաբանին և ասել, որ այստեղ էլ հայցը չկա: Նշվածի կապակցությամբ փաստաբան Արմեն Ումրշատյանը պատասխանել է, որ դատարանում ինչ-որ բան շփոթում են և նա կպարզի ու տեղյակ կպահի Դիմողին:

Օրեր անց Դիմողը դատարանից ստացել է «Հայցադիմումը վերադարձնելու մասին» 01.04.2014թ. որոշում և ստացված ծրարը հանձնել է Արմեն Ումրշատյանին, ով պետք է միջնորդություն գրեր դատարան:

Հետագայում Դիմողը ՀՀ վարչական դատարանից ստացել է «Հայցադիմում ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդությունը մերժելու և հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» 06.05.2014թ. որոշումը:

Դիմողը նաև նշել է, որ փաստաբան Արմեն Ումրշատյանի հետ կապվելը շատ դժվար էր, քանի որ նա չեր պատասխանում հեռախոսազանգերին, իսկ երբ վերջապես կապվում էր նրա հետ, ասում էր, որ շուտով դատական նիստ կլինի:

Փաստաբան Արմեն Ումրշատյանը Դիմողին հայտնել է, որ սեպտեմբերի 7-ին նիստ է նշանակվել, իսկ Դիմողի այն հարցին, թե ինչու՞ իրեն ծանուցագիր չի եկել, փաստաբանը պատասխանել է, որ իրեն են ուղարկել: Դիմողը պահանջել է, որպեսզի փաստաբանը ցույց տա ծանուցագիրը, սակայն փաստաբանն ասել է, որ ծանուցագիրը մեքենայի մեջ է թողել, իսկ Դիմողի այն հարցին, թե ո՞ր ժամին է դատական նիստը նշանակված, փաստաբանը չի կարողացել պատասխանել՝ ասելով, որ կնայի ժամը, հետո կհայտնի:

Դիմողը հայտնել է, որ չվստահելով փաստաբանին գնացել է ՀՀ վարչական դատարան և զանգահարել դատավոր Արծրուն Միրզոյանի օգնականին (ըստ փաստաբանի՝ նիստը նրա մոտ էր նշանակված), որը Դիմողին տեղեկացրել է, որ իրենց կողմից հայց չկա դատավորի մոտ, և առավել ևս սեպտեմբերի 7-ին ընդհանրապես դատական նիստ նշանակված չէ:

Դիմողը վերադարձել է Աբովյան փողոցում գտնվող փաստաբան Արմեն

Ումրշատյանի գրասենյակ և ասել, որ նա նորից խաբում է: Փաստաբանն արդարացել է, որ գործավարը շփոթել է հայցերը, ինչի համար նա աշխատանքից հեռացվել է:

Դիմողն առաջարկել է լուծել պայմանագիրը և վերադարձնել գումարը, քանի որ փաստաբանը պայմանագրով ստանձնած պարտավորությունները չի կատարել և իրավաբանական օգնություն չի ցուցաբերել:

Փաստաբանը տասը օր ժամանակ է խնդրել, ասելով, որ եթե ոչինչ չստացվի գումարը ետ կտա:

Ըստ Դիմողի այդ ընթացքում փաստաբանը կրկին սուտ խոստումներ է տվել, իսկ հոկտեմբերի 20-ին հանդիպել են այն պայմանով, որ գումարը և փաստաթղթերը փաստաբանը պետք է հանձնի Դիմողին, սակայն Արմեն Ումրշատյանն ասել է, որ գումարը մուտք է արել դրամարկղ և 2-3 օր ժամանակ է պետք՝ գումարը հանելու համար: Դիմողը փաստաբան Արմեն Ումրշատյանի մասնակցությունը կատարողական թերթի մերժման որոշմանը գնահատել է 30.000 (երեսուն հազար) ՀՀ դրամ, ինչից հետո նրանք բաժանվել են:

Որոշ ժամանակ անց Դիմողը նամակ է ստացել փաստաբան Արմեն Ումրշատյանից, որտեղ նշվել է, որ իր ընկերությունը 5 րոպե տևողությամբ նիստին մասնակցելու համար պահանջում է 160.000 (հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ: Դիմողը գրավոր նամակով անհամաձայնություն է հայտնել, սակայն մինչև օրս չի կարողանում ետ ստանալ իր տված գումարը՝ 500 (հինգ հարյուր) ԱՄՆ դոլար և 160.000 (հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամը:

Դիմողը դիմել է Պալատին, խնդրելով՝ Պատասխանողի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ, պարտադրել նրան ամբողջությամբ վերադարձնել գումարը:

Դիմողը կարգապահական գործը նախապատրաստողին բացատրություն չի տվել, սակայն ներկայացրել է իր՝ 095625995 բջջային հեռախոսահամարից արված զանգերի վերաբերյալ «Օրանժ Արմենիա» ՓԲԸ-ի հաշվետվությունը, որի մեջ են նաև պատասխանողի հեռախոսահամարին արված զանգերի վերաբերյալ տեղեկությունները:

3.2 Պատասխանողի բացատրության համառոտ բովանդակությունը.

Պատասխանող Արմեն Ումրշատյանը ոչ կարգապահական գործը նախապատրաստողի մոտ և ոչ էլ Խորհրդի առջև բացատրություն չի տվել, թեև ստացել է Նախապատրաստողի կողմից իրեն ուղղված գրությունը և դրանում առաջադրված հարցերը, ինչպես նաև ծանուցված է եղել խորհրդի նիստերի մասին:

3.3. Վկաների ցուցմունքները.

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին

Կարգապահական գործը հանձնվել է Պալատի կարգապահական գործ նախապատրաստող անձ Տիգրան Մուրադյանին, ով հավաքագրելով և

ուսումնասիրելով գործին վերաբերող ապացույցները, 2015 թվականի մարտի 21-ին կազմել է եզրակացություն, ըստ որի ապացուցված է համարել դիմում-բողոքում նշված հետևյալ փաստական հանգամանքները.

- Մինչև 14.02.2014թ. փաստաբանական ծառայությունների մատուցման մասին պայմանագիրը կնքելը փաստաբան Ա. Ումրշատյանը նախապես ուսումնասիրել է շինության նկատմամբ Դիմողի և եղբոր իրավունքների խախտման վերաբերյալ փաստաթղթերը և հայտնել, որ ժամկետի հարց չկա, կարող է գործը գլուխ բերել:
- Երբ Դիմումատուն փաստաբանից տեղեկացել է, որ հայցադիմում է ներկայացրել Մալաթիա Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան և շուտով նիստ է լինելու, այցելել է այդ դատարան, որտեղից տեղեկացել է, որ հայցադիմում չի ներկայացվել: Զանգահարելով փաստաբան Ա. Ումրշատյանին տեղեկացել է, որ հայցադիմումը ներկայացվել է ՀՀ վարչական դատարան, սակայն այցելելով տեղեկացել է, որ այդ դատարանում ևս հայցադիմում չի ներկայացվել:
- Դիմումատուն չի կարողացել խոսել փաստաբան Ումրշատյանի հետ, փաստաբանը չի պատասխանել նրա զանգերին, իսկ երբ հնարավոր է եղել կապ հաստատել, հայտնել է, որ սեպտեմբերի 7-ին նիստ է նշանակվել: Դիմումատուի այն հարցին, թե ինչու ծանուցագիր չի ստացել, փաստաբան Ումրշատյանը պատասխանել է, որ ծանուցագիրն իրեն է ուղարկվել, սակայն դիմումատուին ցույց չի տվել ծանուցագիրը, պատճառաբանելով, որ մեքենայի մեջ է: Դիմումատուն ցանկացել է տեղեկանալ սեպտեմբերի 7-ին նշանակված նիստի ժամը, որը նույնպես փաստաբանը չի հայտնել: Դիմումատուն չհավատալով փաստաբանին այցելել է ՀՀ վարչական դատարան և այնտեղից տեղեկացել, որ հայցադիմում չի ներկայացվել:
- Իրավաբանական օգնություն ցույց չտալու պատճառով դիմումատուն ցանկացել է լուծել պայմանագիրը, որին փաստաբանը գործողություններ կատարելու համար ևս 10 օր ժամանակ է խնդրել, սակայն դարձյալ ոչինչ չի կատարել:
- պատասխանողը կանոնավորապես չի տեղեկացրել դիմումատուին հանձնարարության կատարման ընթացքի մասին և չի պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:
- 30.05.2014թ. սկսած մինչև 10.11.2014թ. դիմումատուի 095625995 հեռախոսահամարից պատասխանողի 055431444 հեռախոսահամարին բազմաթիվ հեռախոսազանգերը կատարվել են այն ժամանակահատվածում, երբ պատասխանողը դադարեցրել էր հանձնարարության կատարման ուղղությամբ որևէ գործողության կատարումը:

Կարգապահական գործը Խորհրդին է հանձնվել 25.03.2015թ-ին:

Խորհրդի նիստերը նշանակվել են 2015 թվականի մայիսի քսանյոթին ժամը 19:30-ին, որը տեխնիկական պատճառով չի կայացել և հուլիսի 06-ին, ժամը՝ 19:15-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. Գործի փաստերը՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

«Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 9-րդ հոդվածի 3-րդ մասի ա) կետի համաձայն՝ Պատասխանողը պարտավոր է Նախապատրաստողի պահանջով ներկայացնել գրավոր բացատրություններ:

Նախապատրաստողը 10.02.2015թ-ին փոստային առաքմամբ Պատասխանողին է ուղարկել 09.02.2015թ. գրությունը, որում բացատրված է բացատրություն տալու Պատասխանողի պարտավորության մասին, նշված են պատասխանողին առաջադրված 13 հարցեր, որոնց վերաբերյալ առաջարկվել է բացատրություն տալ, ինչպես նաև կից ուղարկվել են կարգապահական վարույթի նյութերը:

Պատասխանողը ծանուցումը ստացել է 16.02.2015թ-ին, սակայն առաջադրված հարցերի վերաբերյալ բացատրություն չի տվել:

Նշված փաստերը հաստատվում են 09.02.2015թ. գրության օրինակով, 10.02.2015թ. փոստային անդորրագրով և փոստային ծանուցագրով:

Կարգի 9-րդ հոդվածի 3-րդ մասի բ) կետի համաձայն՝ Պատասխանողը պարտավոր է Նախապատրաստողի եզրակացությունը ստանալու օրվանից տասնօրյա ժամկետում Պալատի խորհրդին ներկայացնել գրավոր առարկություններ, եթե ամբողջովին կամ մասամբ համաձայն չէ Նախապատրաստողի եզրակացության հետ: Առարկությունների մեջ Պատասխանողը պարտավոր է նշել իր փաստարկները Նախապատրաստողի եզրակացության մեջ տեղ գտած փաստերի և ապացույցների գնահատականի վերաբերյալ: **Սույն հոդվածով սահմանված ժամկետում գրավոր առարկություններ չներկայացնելը Պալատի խորհուրդը կարող է որակել, որպես Պատասխանողի կողմից Նախապատրաստողի եզրակացության ընդունում**»:

Պատասխանողը Նախապատրաստողի 21.03.2015թ. Եզրակացությունը ստացել է 02.04.2015 թ-ին, սակայն գրավոր առարկություններ չի ներկայացրել:

Կարգի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «Եթե կողմը հրաժարվում է (խուսափում է) պատասխանել Նախապատրաստողի հարցերին կամ բացատրություններ տալ, ապա Նախապատրաստողը մյուս կողմի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ կարող է անհիմն համարել կողմի հրաժարվելը (խուսափելը) պատասխանից և բացատրություններից, իսկ գործի այն փաստական հանգամանքները, որոնց վերաբերյալ կողմը հրաժարվում (խուսափում) է բացատրություն կամ պատասխան տալուց, կարող է համարել ապացուցված: Ամեն դեպքում պատասխանից կամ բացատրությունից Նախապատրաստողի կողմից որպես անհիմն գնահատված հրաժարումը (խուսափումը) մեկնաբանվում է ի վնաս հրաժարվողի (խուսափողի): Սույն կանոնը կարող է կիրառել նաև Պալատի խորհուրդը»:

Նշված դրույթի կիրառմամբ Նախապատրաստողը անհիմն է համարել Պատասխանողի հրաժարվելը (խուսափելը) պատասխանից և բացատրությունից:

Նշված փաստերը հաստատվում են՝ փոստային անդորրագրով, փոստային ծանուցագրով և եզրակացությամբ:

Պալատի խորհրդի աշխատակազմը Խորհրդի նիստերի մասին ծանուցագրերն ուղարկել է Կողմերին, նրանց իրավունքների և պարտականությունների բացատրմամբ: Պատասխանողը պատշաճ ծանուցված

լինելով Խորհրդի նիստերի մասին, նիստի չի ներկայացել, բացատրություն չի տվել, եզրակացության վերաբերյալ առարկություններ կամ որևէ այլ ձևով անհամաձայնություն չի հայտնել:

Կարգի 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Պալատի Խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, դրա վերաբերյալ Պատասխանողի առարկության բացակայությունը, դա որակում է որպես Պատասխանողի կողմից նախապատրաստողի եզրակացության ընդունում և հաստատված է համարում ներքոնշյալ փաստերը:

Վարույթի նյութերում առկա են՝ Դիմողի 25.11.2014թ. դիմում-բողոքն ուղղված Պալատի նախագահին, 14.02.2014թ. փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագրի պատճենը, փաստաբան Արմեն Ումրշատյանի արտոնագրի պատճենը, ՀՀ վարչական դատարանին ուղղված Դիմողի և նրա եղբոր ներկայացուցիչ փաստաբան Արմեն Ումրշատյանի ստորագրությամբ հայցադիմումի և միջնորդության օրինակները, թիվ ՎԴ/1533/05/14 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 01.04.2014թ. որոշման պատճենը՝ հայցադիմումը վերադարձնելու մասին և 06.05.2014թ. որոշման պատճենը՝ հայցադիմում ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդությունը մերժելու և հայցադիմումի ընդունումը մերժելու մասին, www.datalex.am կայքից թիվ ՎԴ/1533/05/14 վարչական գործի վերաբերյալ տեղադրված տեղեկատվության տպվածքը, փաստաբան Ա. Ումրշատյանի 22.10.2014թ. գրության և Դիմողի 26.10.2014թ. պատասխան գրության պատճենները, «Օրանժ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից 10.11.2014թ. տրված զանգերի մանրամասն հաշվետվությունը՝ Դիմողի 095625995 հեռախոսահամարից արված զանգերի վերաբերյալ, թիվ ԵՄԴ/0265/02/11 քաղաքացիական գործով Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 30.05.2014թ. որոշումը՝ կատարողական թերթի կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ դիմումը քննության առնելու մասին:

Փաստաբանական ծառայությունների մատուցման 14.02.2014թ. պայմանագրի ուսումնասիրությունից հետևում է, որ «Արմեն Ումրշատյան» ՍՊԸ-ն՝ կատարող, պարտավորվել է Արթուր Միրզոյանին՝ պատվիրատու, մատուցել փաստաբանական ծառայություններ, կապված պատվիրատուի սեփականության իրավունքը վերականգնելու հարցի հետ: Պայմանագրի 1.2 կետով սահմանված է, որ փաստաբանական ծառայությունները մատուցվում են փաստաբան Արմեն Ումրշատյանի կողմից:

Պայմանագրի 2.1 կետով՝ ծառայությունների վարձավճարը սահմանվել է 410.000 ՀՀ դրամ, որը 2.3 կետի համաձայն՝ ենթակա է վճարման պայմանագիրը ստորագրելու պահից եռօրյա ժամկետում, իսկ 3.1 կետի համաձայն՝ Կատարողը աշխատանքներն սկսում է Վարձավճարը ստանալուց հետո:

Պայմանագրի 2.4 կետով՝ վարձավճարը ենթակա չէ վերադարձման և վճարվում է կատարողին անկախ մատուցված ծառայությունների արդյունքից, իսկ 2.5 կետի համաձայն՝ ծառայությունների իրականացման ընթացքում անհրաժեշտ ծախսերի համար Կատարողը պատասխանատվություն չի կրում և պատվիրատուն ստանձնում է նշված ծախսերի կատարումը: Պայմանագրի վերջնամասում նշված է, որ. «Պայմանագրի 2.4 և 2.5 կետերը անհրաժեշտ է ընթերցել, այս կտրվածքով, որ այդ գումարը ենթակա է վերադարձման»: Նշված գրառման տակ դրված է Ա. Ումրշատյանի ստորագրությունը:

Պայմանագրի 3.1 կետով՝ կատարողը պարտավորվել է աշխատանքները սկսել վարձավճարը ստանալուց հետո:

Թիվ ՎԴ/1533/05/14 վարչական գործի վերաբերյալ դատական տեղեկատվական համակարգի www.datalex.am կայքում տեղադրված և պատճենահանված տեղեկատվության, ինչպես նաև հայցադիմումը վերադարձնելու մասին ՀՀ վարչական դատարանի 01.04.2014 որոշման համաձայն համաձայն՝ Երևանի քաղաքապետի 20.05.2005թ. թիվ 1096-Ա որոշումը վիճարկելու և հետևանքներ կիրառելու վերաբերյալ հայցադիմումը ՀՀ վարչական դատարան ներկայացվել է 27.03.2014թ.-ին, որը ՀՀ վարչական դատարանի 01.04.2014թ. որոշմամբ վերադարձվել է, պատճառաբանությամբ, որ հայցադիմումը դատարան է ներկայացվել դատավարական ժամկետների ավարտից հետո:

Պատասխանողի կողմից Հայցադիմումը ներկայացնելու համար բաց թողած ժամկետը հարգելի ճանաչելու մասին միջնորդություն է ներկայացվել 28.04.2014թ.-ին: ՀՀ վարչական դատարանը կայացրել է 06.05.2014թ. որոշումը՝ հայցադիմումը ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդությունը մերժելու և հայցադիմումի ընդունումը մերժելու մասին:

Թիվ ՎԴ/1533/05/14 վարչական գործի շարժի վերաբերյալ www.datalex.am կայքում առկա և պատճենահանված տեղեկատվության համաձայն Պատասխանողը այլևս նշված գործով ոչինչ չի կատարել, դատարանի որոշումը չի բողոքարկել և 13.06.2014թ. գործը հանձնվել է դատարանի արխիվ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ հայցը վարչական դատարան կարող է ներկայացվել՝ վիճարկման հայցի դեպքում՝ երկամսյա ժամկետում՝ վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահից:

Հայցադիմումի և միջնդրության ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Պատասխանողը որպես Դիմողի և նրա եղբոր ներկայացուցիչ իր ստորագրությամբ ՀՀ վարչական դատարան ներկայացնելով վիճարկման հայց, այն է՝ մոտ ինը տարի առաջ՝ 20.05.2005թ-ին Երևանի քաղաքապետի կայացրած թիվ 1096-Ա որոշումը մասնակիորեն անվավեր ճանաչելու պահանջ, որևէ ձևով չի հիմնավորել հարգելի պատճառով երկամսյա ժամկետը չպահպանելը, ավելին, ընդհանրապես այդ հանգամանքին չի անդրադարձել, ավելին, հայց ներկայացնելու համար բաց թողած ժամկետը պահպանված չլինելու պատճառաբանութմաբ հայցադիմումը վերադարձնելու մասին ՀՀ վարչական դատարանի 01.04.2014թ. որոշումը ստանալուց հետո հայցադիմումը ներկայացնելու համար բաց թողած ժամկետը հարգելի ճանաչելու մասին միջնորդության մեջ ևս չի նշել, թե հայցվորները երբ են ստացել վիճարկվող

որոշումը, ինչու մինչ այդ չեն կարողացել հայց ներկայացնել և կրկին որևէ ձևով չի հիմնավորել հայց ներկայացնելու համար բաց թողած ժամկետը հարգելի ճանաչելու միջնորդությունը, ինչի արդյունքում էլ ՀՀ վարչական դատարանի 06.05.2014թ. որոշմամբ հայցադիմումի ընդունումը մերժվել է:

Արթուր Միրզոյանն իր 21.03.2015թ. դիմումին կից ներկայացնելով 01.05.2014թ. մինչև 10.11.2014թ. իր 095625995 հեռախոսահամարից փաստաբան Ա. Ումրշատյանի 055431444 հեռախոսահամարին կատարված ելքային զանգերի վերաբերյալ «Օրանժ Արմենիա» ՓԲԸ-ի հաշվետվությունը, հայտնել է, որ դրանում նշված են միայն այն զանգերը, որոնց Ա. Ումրշատյանը պատասխանել է, իսկ նրանք, որոնց չի պատասխանել՝ չեն նշվել: Նշել է նաև, որ տեղեկանքում առկա են նաև պատասխանողին ուղարկված SMS հաղորդագրությունների ամսաթվերը:

«Օրանժ Արմենիա» ՓԲԸ-ի հաշվետվության ուսումնասիրությունից հետևում է, որ Դիմողի 095625995 հեռախոսահամարից Ա. Ումրշատյանի 055431444 հեռախոսահամարին զանգերը կատարվել են հետևյալ ամսաթվերին՝ 2014թ. մայիսի 3-ին, 8-ին, 12-ին, 13-ին, 14-ին, 15-ին, 22-ին, 27-ին, 28-ին, 30-ին, հունիսի 12-ին, 18-ին, 19-ին, 23-ին, 28-ին, հուլիսի 4-ին, 9-ին, 11-ին, 21-ին, օգոստոսի 7-ին, 11-ին, 13-ին, 14-ին, սեպտեմբերի 5-ին, 8-ին, 16-ին, 20-ին, 21-ին, հոկտեմբերի 9-ին, 16-ին, 18-ին, 20-ին, 27-ին, 28-ին, 29-ին, 30-ին, նոյեմբերի 7-ին:

Դիմող Ա. Միրզոյանին ուղղված 22.10.2014թ. թիվ 0120 գրությամբ Ա. Ումրշատյանը հայտնել է, որ 20.10.2014թ. Դիմողը ցանկություն է հայտնել դադարեցնել 14.02.2014թ. ծառայությունների մատուցման պայմանագիրը, որի ուժով Դիմողին փոխանցվել է փաստաբանական վարույթն ամբողջությամբ՝ իր փաստաթղթերով: Նշել է, որ որպես «Արմեն Ումրշատյան» ՍՊԸ տնօրեն չի առարկում 14.02.2014թ. ծառայությունների մատուցման պայմանագրի գործողությունը միակողմանի դադարեցնելու առաջարկին և 22.10.2014թ. դրությամբ պայմանագիրը համարում է դադարեցված:

22.10.2014թ. թիվ 0120 գրությամբ Ա. Ումրշատյանը նշել է, որ Դիմողը վճարել է ոչ թե պայմանագրով նախատեսված 410.000 ՀՀ դրամը, այլ 360.000 ՀՀ դրամ:

22.10.2014թ. թիվ 0120 գրությամբ Ա. Ումրշատյանը նշել է նաև, որ. «Ձեզ մատուցվել է ծառայություններ միայն Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանում կատարողական թերթի կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը հարգելի համարելու հայցապահանջով, որի արդյունքում դատական նիստը լուծվել է ձեր օգտին» և միայն այդ դատական նիստին մասնակցելու համար, ինչպես նաև վճարված 360.000 ՀՀ դրամի ԱԱՀ հարկային պարտավորությունները հաշված ընկերությունն իր ծառայությունները գնահատում է 160.000 ՀՀ դրամ չափով և Դիմողի համաձայնության դեպքում պատրաստ է վերադարձնել 200.000 ՀՀ դրամ:

22.10.2014թ. թիվ 0120 գրությամբ ՀՀ վարչական դատարանին 2 անգամ ներկայացված՝ մի դեպքում վերադարձված, մյուս դեպում հայցադիմումի ընդունումը մերժված հայցերի մասով նշել է, որ Դիմողից այդ մասով չպետք է գումար պահվի:

Պատասխանողին ուղղված 26.10.2014թ. գրությամբ Դիմողը հայտնել է, որ 14.02.2014թ. ծառայությունների մատուցման պայմանագրի 1.1 կետով նախատեսված պարտականությունները, որպես կատարող չի կատարվել, որը Ա.

Ումրշատյանն ընդունել է իր նամակում: Իր գրությամբ Դիմողը նշել է, որ Ա. Ումրշատյանին վճարել է 500 ԱՄՆ դոլար և 160.000 ՀՀ դրամ, իսկ Մալաթիա Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանում մատուցված ծառայությունը վերաբերվել է կատարողական թերթի կատարման բաց թողնված ժամկետը հարգելի համարելուն, որն եղել է 14.02.2014թ. պայմանագրով չնախատեսված առանձին ծառայություն: Դիմողը նկատի ունենալով, որ առանձին ծառայության արժեքը չի որոշվել, այն գնահատել է 30.000 ՀՀ դրամ, որը հանելով իր կատարած վճարներից պատասխանողից պահանջել է 500 ԱՄՆ դոլար և 130.000 ՀՀ դրամ:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 06.07.2015թ. տրամադրված տեղեկանքի համաձայն Արմեն Ումրշատյանը փաստաբանական գործունեության արտոնագիր է ստացել 28.02.2000թ.-ին: 2006-2015թթ. վերջինիս նկատմամբ հարուցվել է 8 կարգապահական վարույթ (ավարտված վարույթներ), ինչպես նաև բացի սույն վարույթից առկա է ևս մեկ ընթացիկ վարույթ:

Տեղեկանքի հավելվածը հանդիսացող աղյուսակի համաձայն Արմեն Ումրշատյանի նկատմամբ հարուցված և ավարտված կարգապահական վարույթներից՝

- Երկուսը հարուցվել են անդամավճարի պարտք ունենալու հիմքով, որոնցից երկուսն էլ կարճվել են՝ արտոնություն կիրառելու հիմքով,
- Մեկը հարուցվել է Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (այսուհետ նաև՝ Կանոնագիրք) 2.2.2, 2.7.2 և 3.6.1 ենթակետերի հիմքով, և կարճվել է,
- Երկու կարգապահական վարույթներով Պատասխանողը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության նկատողության տեսքով և տույժերը մարվել են (մեկը՝ 2006թ. ընդունված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 1.1-րդ կետի հիմքով, մյուսը՝ Կանոնագրքի 2.6.1, 2.7.2 և 3.6.1 ենթակետերի խախտման հիմքով)

Բացի այդ,

- 22.02.2013թ. թիվ 6ԿԳ/1-Ա որոշմամբ Կանոնագրքի 2.7.2 և 3.6.1 ենթակետերի խախտման հիմքով Պատասխանողը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ 100.000 ՀՀ դրամի չափով տուգանքի տեսքով, և տույժը չի մարվել,
- 03.10.2014թ. թիվ 157ԿԳ/1 որոշմամբ Կանոնագրքի 2.2.1, 2.2.2 և 2.7.2 ենթակետերի խախտման հիմքով ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ 150.000 ՀՀ դրամի չափով տուգանքի տեսքով, և տույժը չի մարվել,
- 10.02.2015թ. թիվ ԿԳ/29-Ա որոշմամբ Կանոնագրքի 2.7.2 և 3.6.1 ենթակետերի խախտման հիմքով ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ 200.000 ՀՀ դրամի չափով տուգանքի տեսքով, ինչպես նաև իր հաշվին լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցություն «Դեոնթոլոգիա» թեմայով 8 (ութ) ակադեմիական ժամ ժամաքանակով և տույժը չի մարվել:

Ինչ վերաբերվում է Արմեն Ումրշատյանի նկատմամբ հարուցված և

ընթացիկ կարգապահական վարույթին, ապա այն հարուցվել է Կանոնագրքի 2.7.2, 3.1.8, 3.5.5 և 3.6.1 ենթակետերի խախտման հիմքով:

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Գնահատելով գործում առկա ապացույցները, Խորհուրդը գտնում է, որ 25.12.2014թ. հարուցված կարգապահական վարույթի արդյունքում փաստաբան Արմեն Ումրշատյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Կանոնագրքի 2.7.2, 3.1.8 և 3.5.5 ենթակետերի պահանջների խախտման համար, իսկ 3.6.1 կետի հիմքով գործի վարույթը ենթակա է կարճման ներքոհիշյալ պատճառաբանությամբ:

Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.7.2 ենթակետի համաձայն. «Փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում»:

Կանոնագրքի 3.1.8 ենթակետի համաձայն. «Փաստաբանն իրավական օգնություն ցույց տալու հանձնարարությունը չպետք է ընդունի, եթե զբաղվածության կամ որևէ այլ պատճառով չի կարող ապահովել հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարումը»:

Կանոնագրքի 3.5.5 ենթակետի համաձայն. «Փաստաբանը պարտավոր է ժամանակին, գիտակցաբար և ջանասիրաբար խորհուրդ տալ և պաշտպանել իր վստահորդին և հանդես գալ նրա անունից»:

Կանոնագրքի նշված դրույթներից ելնելով Խորհուրդը գտնում է, որ սույն վարույթի լուծման համար էական նշանակություն ունի այն, թե հանձնարարությունն ընդունելիս բավարար էր արդյոք Պատասխանողի մոտ իրավունքի համապատասխան ճյուղի իմացությունը, պատասխանողի կողմից կատարվել էր արդյոք վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար պատասխանողը ժամանակին և ջանասիրաբար կատարել էր արդյոք անհրաժեշտ գործողություններ:

Խորհուրդը գտնում է, որ տվյալ դեպքում հանձնարարությունն ընդունելիս պատասխանողի մոտ բավարար չի եղել իրավունքի համապատասխան ճյուղի, այն է՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված հայց ներկայացնելու ժամկետի, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի իմացությունը: Այդ փաստը հաստատվում է նրանով, որ թեև Պատասխանողի ստորագրությամբ հայցադիմումը 28.04.2014թ.-ին ՀՀ վարչական դատարան է ներկայացվել դրանից մոտ ինը տարի առաջ ընդունված՝ Երևանի քաղաքապետի 20.05.2005թ. թիվ 1096-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջով, որը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի համաձայն վիճարկման հայց է, որպիսի պահանջ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն կարող էր ներկայացվել երկամսյան ժամկետում՝

վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահից, Պատասխանողը հայցադիմումում որևէ ձևով չի հիմնավորել նշված ժամկետը բաց թողնելու հարգելի պատճառը և չի միջնորդել, որ դատարանն այդ պատճառը հարգելի համարի:

Պատասխանողը հայցադիմումում նշել է, որ «Բարձրավոլտ Էլցանցեր» ՓԲ ընկերությունը. «առանց հաշվի առնելու, որ իրենք օրինական կարգով են դարձել 36,4քմ մակերեսով շինության և հողի նկատմամբ սեփականատեր և վարձակալ, դիմել են դատարան, նրանց տարածքը ազատելու պահանջով», ինչպես նաև հայցադիմումին կից ներկայացրել է մեկ այլ՝ ՎԴ/1200/05/12 վարչական գործով վճռի պատճենը, որոնցով հաստատվում է, որ Պատասխանողը տեղեկացված եղել է իր վստահորդների և իր կազմած հայցադիմումով համապատասխանողների ու երրորդ անձ՝ «Բարձրավոլտ Էլցանցեր» ՓԲ ընկերության միջև նախկինում քննված դատական վեճերի մասին, ուստի նաև այդ ժամանակից իմացել են կամ կարող էին իմանալ Երևանի քաղաքապետի վիճարկվող որոշման, ուստի և դատարան դիմելու համար սահմանված ժամկետը բաց թողնելու մասին:

ՀՀ վարչական դատարանը 01.04.2014թ. որոշմամբ հայցադիմումը վերադարձրել է հայցադիմումը դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացնելու պատճառաբանությամբ:

Նշված որոշումը ստանալուց հետո 28.04.2014թ-ին Պատասխանողը կրկին ներկայացրել է հայցադիմումը և հայցադիմում ներկայացնելու համար բաց թողած ժամկետը հարգելի ճանաչելու մասին միջնորդություն, որում ևս չի նշել, թե հայցվորները երբ են ստացել վիճարկվող որոշումը, ինչու մինչ այդ չեն կարողացել դա վիճարկելու հայց ներկայացնել դատարան և կրկին որևէ ձևով չի հիմնավորել հայց ներկայացնելու համար բաց թողած ժամկետը հարգելի ճանաչելու միջնորդությունը, այլ որպես նման հիմնավորում նշել է՝ հայցվորները «իրենց իրավունքները փորձել են պաշտպանել դատական կարգով և գրանցված իրավունքի մասին տեղեկացել են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված ժամկետների խախտմամբ», ինչի արդյունքում էլ ՀՀ վարչական դատարանի 06.05.2014թ. որոշմամբ հայցադիմումի ընդունումը մերժվել է: Նշված ձևակերպումն ընդամենը Պատասխանողի կողմից ընդունումն է այն փաստի, որ հայցը ներկայացվել է դատավարական ժամկետների խախտմամբ, բայց թե ինչու պետք է դա հարգելի ճանաչվի, միջնորդության մեջ նշում չկա:

Կարևոր է նաև, որ Դիմողի և Պատասխանողի միջև փաստաբանական ծառայությունների մատուցման մասին պայմանագիրը կնքվել է 14.02.2014թ-ին, գումարը՝ 360.000 դրամ, ըստ պատասխանողի, կամ 500 ԱՄՆ դոլար և 160.000 դրամ, ըստ Դիմողի, (պայմանագրի կնքման օրվա դրությամբ 500 ԱՄՆ դոլարը համարժեք է եղել 206.000 դրամի), վճարվել է Կատարողին, սակայն հայցադիմումը դատարան է ներկայացվել 28.04.2014թ-ին, այսինքն պայմանագիրը կնքելուց մեկ և կես ամիս անց:

Խորհուրդը գտնում է, որ եթե Պատասխանողը բավարար գիտելիքներ ունենար տվյալ բնագավառում, ապա իր համար պարզ կլիներ, որ տվյալ փաստական հանգամանքների պայմաններում դատավարական ժամկետները բաց են թողնվել և չէր ստանձնի Դիմողի գործը, իսկ ստանձնելուց հետո էլ բավարար ժամանակ ունեցել է, որպեսզի պարզի, որ դատավարական ժամկետները բաց են թողնվել: Իսկ եթե այնուամենայնիվ հարգելի և իրական

պատճառ է եղել դատարան դիմելու ժամկետը բաց թողնելու համար, ապա գոնե այդ պատճառի նշմամբ կմիջնորդեր բաց թողած ժամկետը հարգելի ճանաչելու մասին, ինչը չի արվել:

Խորհուրդը նաև կարևորում է, որ հայցադիմումում հայցապահանջի իրավական հիմնավորումներ մասը կազմված է 5 էջից, որից չորս և կես էջը տարբեր օրենքներից մեջբերումներ են և միայն կես էջ վերլուծություն, որը ամփոփվում է հետևյալ կերպ. «Համադրումը պարզ երևում է Ընկերության և ինձ լիազորողներին պատկանող գլխավոր հատակագծից, որտեղ կարմրով նշված է վիճելի տարածքը: Այդ հանգամանքը անտեսվել է և ինձ լիազորողները մասնակից չեն դարձվել Երևանի քաղաքապետարանի կողմից վարչական վարույթի հարուցման քննարկման ժամանակ, որով և թույլ է տրվել **ՀՀ վարչ.դատ.օր-ի** պահանջների կոպիտ խախտումներ, որոնց ուժով էլ ներկայացվում է սույն հայցապահանջը»:

Պատասխանողը, փաստորեն, անձին վարչական վարույթին մասնակից չդարձնելը դիտարկում է որպես ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի պահանջների կոպիտ խախտում, այն դեպքում, երբ նշված օրենսգիրքը նման հարաբերությունները չի կարգավորում: Այդ հարաբերությունները կարգավորվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով:

Վերը նշված հիմնավորումներով Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողը խախտել է Կանոնագրքի 2.7.2, 3.1.8 և 3.5.5 ենթակետերի խախտում:

Անդրադառնալով նշանակվելիք կարգապահական տույժի տեսակին՝ Խորհուրդը հաշվի է առնում փաստաբան Արմեն Ումրշատյանի անձը բնութագրող հանգամանքները, մասնավորապես այն, որ վերջինս Փաստաբանի վարքագծի կանոնագրքի խախտման համար ունի երեք չմարված և նրա կողմից չկարատված տույժեր, որոնցից 22.02.2013թ. թիվ 6ԿԳ/1-Ա որոշմամբ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ 100.000 ՀՀ դրամի չափով, 03.10.2014թ. թիվ 157ԿԳ/1 որոշմամբ՝ 150.000 ՀՀ դրամի չափով, 10.02.2015թ. թիվ ԿԳ/29-Ա որոշմամբ՝ 200.000 ՀՀ դրամի չափով տուգանքի տեսքով, ինչպես նաև իր հաշվին լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցություն «Դեոնթոլոգիա» թեմայով 8 (ութ) ակադեմիական ժամ ժամաքանակով և տույժերը նրա կողմից չեն կատարվել և չեն մարվել:

Խորհուրդը գտնում է, որ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պատժամիջոցներից Պատասխանողի նկատմամբ պետք է կիրառել տուգանք՝ 200.000 (երկու հարյուր հազար) դրամի չափով, ինչպես նաև լրացուցիչ կարգապահական տույժ՝ իր հաշվին 6 ամսվա ընթացքում լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցություն՝ «Դեոնթոլոգիա» թեմայով, 8 (ութ) ակադեմիական ժամ ժամաքանակով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ նա ունի 100.000 ՀՀ դրամ և 150.000 ՀՀ դրամ տուգաքի ձևով չմարված տույժեր:

Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.6.1 ենթակետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:

«Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականաման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմերից

յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

Դիմողի կողմից որպես վերը նշված փաստերը հավաստող ապացույց ներկայացվել է հեռախոսային օպերատորի կողմից տրված տեղեկանքը՝ միայն Դիմողի ելքային զանգերի մասին, որում առկա են նաև Պատասխանողին արված զանգերի մասին տեղեկություններ, սակայն դրանում առկա չեն Պատասխանողի կողմից Դիմողին արված զանգերի վերաբերյալ տեղեկությունները, որպիսի պայմաններում Խորհուրդը չի կարող հաստատված համարել, որ Պատասխանողը կատարել Կանոնագրքի 3.6.1 ենթակետի խախտում:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ փաստաբանների պալատի խորհուրդը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ հիմնավորված չէ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ, 39-րդ, 39.6-ից 39.9-րդ հոդվածների, Պալատի կանոնադրության 16.26 կետի պահանջներով՝ Պալատի խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Արմեն Ումրշատյանին (արտոնագիր՝ 385) մեղավոր ճանաչել Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.7.2, 3.1.8 և 3.5.5 ենթակետի պահանջների խախտման համար:

2. Փաստաբան Արմեն Ումրշատյանի նկատմամբ նշանակել կարգապահական տույժ՝ 200.000 (երկու հարյուր հազար) դրամ տուգանք և լրացուցիչ կարգապահական տույժ՝ իր հաշվին 6 ամսվա ընթացքում լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցություն՝ «Դեոնթոլոգիա» թեմայով, 8 (ութ) ակադեմիական ժամ ժամաքանակով:

3. Փաստաբան Արմեն Ումրշատյանի (արտոնագիր՝ 385) նկատմամբ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.6.1 ենթակետի հիմքով հարուցված կարգապահական վարույթը կարճել՝ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը հիմնավորված չլինելու հիմքով:

4. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Արմեն Ումրշատյանին և Դիմողին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

Նիստը նախագահող՝ Կարեն Մեժլումյան